UPower

Կին սոցիալական ձեռներեցների տեղեկագիր

ՀՈՒՆԻՍ 2023 | N. 1

U.POWER ԾՐԱԳԻՐ

U. POWER ծրագիրը, որը համաֆինանսավորվում է Եվրոպական հանձնաժողովի կողմից և մեկնարկել է այս տարվա հունվարին, ունի 7 գործընկեր կազմակերպություն, որոնք միասին աշխատելով խթանում են կանանց շրջանում սոցիալական ձեռներեցությունը:

Առաջին քայլեր

Համագործակցությունն Իռլանդիայի, Իտալիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Լատվիայի, Հայաստանի և Իսպանիայի գործընկերների միջև կհանգեցնի ինովացիոն դասընթացների ընդլայնմանը՝ նպատակ ունենալով ոգեշնչել գործընկեր երկրներում բնակվող կանանց՝ հնարավորություն տալով մտնելու համաշխարհային սոցիալական ձեռնարկատիրություն:

Ծրագիրը սկսվել է հետազոտության փուլից՝ հիմնվելով տվյալների, հարցաթերթիկների և ոլորտում փորձ ունեցող դերակատարների հետ հարցազրույցների վերլուծությունների վրա:

Միջազգային դիտարկման արդյունքները շուտով կներկայացվեն հաշվետվության տեսքով և կօգնեն գործընկերներին վեր հանել կարիքները և բացթողումները, որոնք էլ կհանդիսանան վիդեո-դասընթացի մեկնարկային կետը:
.

ԿԱՆԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆ

Մեր հետազոտությունը

Ի՞նչ բացահայտեցինք զրուցելով այն կանանց և փորձագետների հետ, ովքեր արդեն հասցրել են ստեղծել իրենց ձեռնարկությունը:
Կանանց շրջանում մի քանի տարածված վախեր և խոչընդոտներ կան, որոնք նրանց հետ են պահում իրենց ձեռնարկատիրական գաղափարները ռեալիզացնելուց:
Ամենատարածվածներից մեկը, օրինակ, ֆինանսական և ադմինիստրատիվ կառավարման գիտելիքների բացակայությունն է, որը կարող է շատ լուրջ խնդիր հանդիսանալ:
Փափուկ հմտությունների կարևորությունը, ինչպիսին են հաղորդակցությունը, հարմարվողականությունը, ստեղծագործ միտքը, նույնպես պարզ դարձավ մեր հետազոտությունից:

Մանրամասները կներկայացվեն շուտով՝ միջազգային հաշվետվության շրջանակենրում:

“ Ես ցանկանում եմ, որ ամեն փոքրիկ աղջկա, ում ասել են, որ նա թելադրող է, ասեն նաև, որ նա ունի առաջնորդի հմտություններ:

Շերին Սենդբերգ, Ֆեյսբուքի գործառնական հարցերով տնօրեն

ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կայք և սոցիալական մեդիա

Մեր երկու տարվա ծրագիրը կուղեկցվի տարբեր նախաձեռնություններով, հնարավորություններով և հետաքրքիր զարգացումներով, որոնց մասին կպատմենք սիրով: Ծրագիրն արդեն իսկ ներկայացված է Ինստագրամ և Ֆեյսբուք սոցիալական ցանցերում:

Գործում է նաև ծրագրի պաշտոնական կայքը **www.upowererasmus.com**, որտեղ կգտնեք U.POWER-ի վերաբերյալ նորություններ և հետաքրքիր պատմություններ: Բաց չթողնե՛ք:

u.power

u.powerproject

Co-funded by
the European Union

KA220-ADU-992AC3A1